ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է Արթիկ համայնքի աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը:

Նիստին ներկա էին ավագանու 21 /քսանմեկ/ անդամներ, բացակայում էին ավագանու 6/վեց/ անդամներ՝ Գայանե Սալնազարյանը, Հայկ Գևորգյանը, Մխիթար Վարագյանը Հարություն Հակոբյանը, Հակոբ Մաթիլյանը, Արևիկ Մուրադյանը,:

Նիստին մասնակցում էին Արթիկ համայնքի ավագանու 21/քսանմեկ/ անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Արթուր Աստոյանը, Արտակ Հարությունյանը, Արման Տոնոյանը, Նարինա Վարդանյանը, Հովհաննես Սահակյանը, Լիլիթ Հաջաթյանը, Գայանե Մինասյանը, Արտակ Ռափյանը, Ոսկան Վարդանյանը, Մուշեղ Մկրտչյանը, Մեսրոպ Վարագյանը, Արմինե Աղրամանյանը, Տիգրան Բաղդասարյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը, Գոռ Պետրոսյանը, Մանուկ Գևորգյանը, Աստղիկ Պետրոսյանը, Արտյոմ Չարչյանը, Ժաննա Ասատրյանը:

Նիստին ներկա էին համայնքի ղեկավարի տեղակալներ Վարդան Մակեյանը, Արման Աջամօղլյանը, աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Ցոլակ Հովհաննիսյանը,աշխատակազմի քարտուղարության և ՏՏ բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող ՝ Արկադի Թադևոսյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող Էմմա Յայլոյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող Սեյրան Ղռաթյանը, համայնքապետարանի այլ աշխատակիցներ, վարչական ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Բացման խոսքով հադես եկավ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը, ներկայացնելով նիստի օրակարգը: Օրակարգը դրվեց քվեարկության, այն ընդունվեց կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողերից ուղղակի վաճառքով Գեորգի Գրիգորի Մարտիրոսյանին և Սվետլանա Մարդոյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անասնաբուժարանի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասն օտարելու և օտարման գին հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 11-ի 69-Ա, 70-Ա, 71-Ա,72-Ա,73-Ա, 74-Ա,75-Ա, 76-Ա,77-Ա, 78-Ա,79-Ա, 76-Ա,77-Ա, 78-Ա,79-Ա ԵՎ 80-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող մարդատար մեքենաները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Ավագանու անդամներ՝

Կողմ (21)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան Անանիկ		
Աղրամանյան Արմինե		
Բաղդասարյան Տիգրան		
Գևորգյան Էմիլ		
Հովհաննիսյան Վարդուհի		
Պետրոսյան Գոռ		
Գևորգյան Մանուկ		
Պետրոսյան Աստղիկ		
Չարչյան Արտյոմ		

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աստոյան Արթուր

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց համայնքապետարանի առաջատար մասնագետ Ամալյա Մովսիսյանը՝ նշելով, որ սոցիալական հարցերով համայնքապետարան են դիմել Արթիկ համայնքի տարբեր բնակավայրերի բազմաթիվ բնակիչներ, որոնց դիմումները ուսումնասիրվել են տունայցելությունների միջոցով, օգնության գումարները սահմանվել են կառավարության կողմից հաստատված բալային համակարգի միջոցով: Ա.Մովսիսյանը ներկայացրեց սոցիալապես անապահով այն 26 ընտանիքների ցուցակը, որոնց պետք է հատկացվի 630000 ՀՀ դրամի աջակցություն; Ավագանու անդամ Մ.Վարագյանի հարցին, թե քանի դիմում է մերժվել և ինչ պատճառով, Ա.Մովսիսյանը պատասխանեց, որ մերժվել է 4 դիմում, որոնք չեն համապատասխանել կարիքների գնահատման չափանիշներին: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (21) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Գոռ

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Չարչյան Արտյոմ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աստոյան Արթուր

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող Սեյրան Ղռաթյանը: Նա ներկայացրեց Շիրակի մարզի Արթիկ համայքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողերից ուղղակի վաճառքով Գեորգի Գրիգորի Մարտիրոսյանին և Սվետլանա Մարդոյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անասնաբուժարանի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասն օօտարելու և օտարմանը գին հաստատելու մասին որոշման նախագիծը:Ներկայացված հարցի քննարկմանը մասնակցեցին ավագանու անդամներ՝ Ռ.Վարդանյանը, Ա.Աստոյանը, Մ.Վարագյանը: Ռ.Վարդանյանը նշեց, որ համայնքի համար ձեռնտու է հողերի երկարատև վարձակալությունը, որը կարող է ավելի շատ գումար բերել համայնքին: Քննարկումից պարզվեց, որ խոսքը 0,0868 հա մակերեսով հողամասի մասին է:Հողամասի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատվեց տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 514,8 << դրամ: Հողամասի օտարումից համայնքի բյուջե կմուտքագրվի մոտ չորս հարյուր հիսուն հազար << դրամ: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (21) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Գոռ

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Չարչյան Արտյոմ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աստոյան Արթուր

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 3-րդ և 4-րդ հարցերը ներկայացրեց համայնքապետարանի առաջատար մասնագետ-իրավաբան՝ Տաթևիկ Աղաքարյանը: Օրակարգի երկու հարցերն էլ վերաբերում են Արթիկ համայնքի կազմի մեջ մտնող նախկին գյուղական բնակավայրերի հաշվեկշռում գտնված և ներկայումս Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող մեքենաներին: Համայնքի 2022 թվականի մայիսի 11-ի նիստին այդ մեքենաների համար որոշումներ են կայացվել, սակայն այդ ժամանակ դեռևս չի եղել աճուրդային հանձնաժողով, կանոնադրություններ, ուստի օրակարգի 3-րդ հարցով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել այդ մեքենաների վերաբերյալ համայնքի ավագանու 2022թվականի մայիսի 11-ի

69-Ա, 70-Ա, 71-Ա, 72-Ա, 73-Ա, 74-Ա, 75-Ա, 76-Ա, 77-Ա, 78-Ա, 79-Ա, 80-Ա որոշումները: Օրակարգի 4-րդ հարցով առաջարկվում է այդ նույն թվով 12 մարդատար մեքենաները օտարել աճուրդային եղանակով, հաստատել օտարման մեկնարկային գին և աճուրդային պայմաններ:Մնացած 5 մարդատար մեքենաները պետք է մնան համայնքին և օգտագործվեն տարբեր նպատակների համար:Ավագանու անդամների հարցերին պատասխանելով Տ.Աղաքարյանը նշեց, որ մեքենաների տեխնիկական վիճակը գնահատվում է հատուկ լիցենզավորված կազմակերպության կողմից, գնահատելով նրանց տեխնիկական վիճակը,որի արդյունքում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում են աճուրդի մենկարկային գները: Համայնքի ավագանին քննարկելուց հետո հաստատեց

ա)Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, աճուրդ վաճառքով օտարվող մեքենաների ցանկը և մեկնարկային գները:

բ) Աճուրդի մասին հրապարակային ծանուցման հայտարարություն

գ)Հայաստանի Հանրապետության Շիարկի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող մարդատար ավտոմեքենաների աճուրդով օտարման աճուրդային հանձնաժողովի /աճուրդի կազմակերպիչ/ գործունեության կանոնակարգը:

Քննարկումից հետո նշված երկու հարցերն էլ դրվեցին քվեարկության և ընդունվեցին կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (21)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան Անանիկ		
Աղրամանյան Արմինե		
Բաղդասարյան Տիգրան		
Գևորգյան Էմիլ		
Հովհաննիսյան Վարդուհի		
Պետրոսյան Գոռ		
Գևորգյան Մանուկ		
Պետրոսյան Աստղիկ		
Չարչյան Արտյոմ		
Հարությունյան Արտակ		
Տոնոյան Արման		
Վարդանյան Նարինա		

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Աստոյան Արթուր

Ասատրյան Ժաննա

Օրակարգի հարցերի ավարտից հետո ավագանու անդամների հարցերին պատասխանեցին համայնքի ղեկավարը,համայնքապետարանի աշխատակիցները:Ավագանու անդամ Ա. Աստոյանը հարց բարձրացրեց Արթիկ քաղաքում էլեկտրականության հաճախակի անջատումների մասին,նշելով ,որ անհրաժեշտ է հին սարքավորումները փոխարինվեն նորորով,որի համար ֆինանսական ներդրումներ են պետք:Իսկ ավագանու անդամ Հ.Սահակյանը բարձրացրեց համայնքի գյուղերում խաղասենյակների բացակայության վերաբերյալ հարցը,որին պատասխանեց համայնքի ղեկավար Ա.Ոսկանյանը:

Ավագանու անդամ Մ.Վարագյանի հարցադրմանը համայնքի պաշտոնական պատվիրակության Լեհաստան կատարված այցի և առաջիկայում սպասվելիք Ֆրանսիա կատարվելիք այցելության մասին մանրամասն ինֆորմացիա ներկայացրեց համայնքի ղեկավար Ա.Ոսկանյանը: Նիստի օրակարգի ավարտից հետո Արթիկ համայնքի ղեկավար Ա.Ոսկանյանը հայտատարեց, որ այս նիստը հանդիսանում է առաջին նստաշրջանի վերջին նիստը, նա ավագանու բոլոր անդամներին շնորհակալություն հայտնեց համատեղ արդյունավետ և ակտիվ աշխատանքի համար: Նա նշեց, որ երկրորդ նստաշրջանի առաջին նիստը օրենք պահանջի համապատասխան կիրավիրվի սեպտեմբերի 13-ին: Նիստի ավարտին ներկաները հոտնկայս ունկնդրեցին Հայաստանի Հանրապետության օրհներգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Արթիկ համայնք
24 հունիսի 2022թվական